



Հունվարի 19-ին «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի նախաձեռնությամբ կազմակերպվել էր շաբաթօրյակ Կարմիր բլուր հնավայրի տարածքում: Միջոցառմանը միացել էին բազմաթիվ մասնակիցներ, այդ թվում՝ Մեքսիկայից և Ռուսաստանից: Շաբաթօրյակի ընթացքում բլուր մասնակիցների միահամուռ ջանքերով զգալիորեն մաքրվեց և բարեկարգվեց Կարմիր բլուրի տարածքը:

Միջոցառման ընթացքում բլուր մասնակիցներին բաժանվեցին Կարմիր բլուրի վերաբերյալ բացատրական թերթիկներ: Այնուհետ «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Միքայել Բադալյանը բլուր մասնակիցներին ներկայացրեց հուշարձանը, խոսվեց ուրարտական տեղության, Կարմիր բլուրում իրականացված պեղումների, հնավայրի դերի և նշանակության, ինչպես նաև՝ առկա խնդիրների և հեռանկարների մասին: Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի [«Կարմիր բլուր»](#)

մասնաճյուղի աշխատակիցներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում շաբաթօրյակի բլուր մասնակիցներին և հավաստիացնում, որ նման միջոցառումներն ունենալու են պարբերական բնույթ: